

YARD Ճարտարապետական Ինստիտուտ

Բյուջե

Նպատակը

Երևանի նորաբաց YARD ճարտարապետական դպրոցի դասախոսությունների դահլիճի վերանորոգում

Նկարագրություն

YARD-ը Երևանի նոր ճարտարապետական դպրոց է, որը միավորում է ակադեմիական հետազոտությունը, գործնական փորձը և կիրառական ուսուցումը: Վերջերս Երևանի պատմական Շամպայն գինիների գործարանի տարածքում տարածք ստանալով՝ YARD-ը ստեղծում է միջավայր ճարտարապետների և դիզայներների նոր սերնդի ձևավորման ու զարգացման համար:

Դպրոցի կենտրոնական տարածքը գործարանի նախկին համտեսի սրահն է՝ իր նրբագեղ ձևավորմամբ և առանձնահատուկ արտ դեկո ոճի որմնանկարներով, որոնք արտացոլում են շենքի բնույթն ու պատմությունը: YARD-ը նախատեսում է վերականգնել և վերափոխել այս պատմական տարածքը՝ դարձնելով այն դպրոցի հիմնական դասախոսությունների դահլիճն ու ընդհանուր հանդիպումների սրահը: Այն կդառնա բազմաֆունկցիոնալ միջավայր, որտեղ ուսանողները, դասախոսներն ու ճարտարապետական համայնքի ներկայացուցիչները կկարողանան սովորել, մտքեր փոխանակել և համագործակցել:

Վերանորոգված տարածքը նախատեսված է շուրջ 70 ուսանողի համար և ծառայելու է որպես դպրոցի կենտրոնական հարթակ՝ հետևյալ միջոցառումների և գործունեության համար.

- Դասախոսություններ և սեմինարներ
- Գործնական աշխատարաններ
- Ուսանողների և դասախոսների աշխատանքների ներկայացումներ
- Համատեղ ուսուցում և նախագծային աշխատանքներ
- Համայնքային միջոցառումներ և հանդիպումներ

Բյուջե

Նյութ / Տեսակ	Ընդհանուր
Առաստաղների հարդարում	
• Գիպսաստվարաթուղթ պրոֆիլ ՊՊ 60x27	66,780
• կախման դետալներ - tross	150,000
Պատերի հարդարում	
• Երկու շերտով ներկում RAL 9016	240,150
• Սալիկներ՝ Kerama Marazzi, Չափս՝ 20x30սմ սպիտակ ջնարակապատված	102,870
Հատակների հարդարում	
• Մանրահատակի հղկում (шлифовка) (+ աշխատանք)	300,000
Էլ. սարքավորումներ	
• Կետային լույսեր կախված գ/ս պրոֆիլներից (չժանգոտվող պողպատ)	1,540,000
• ԼԵԴ երկայնական պրոֆիլով լույսեր, գ/ս պրոֆիլներին ամրացվող	129,600
• Պրոեկտոր և էկրան	1,000,000
• հակահրդեհային տվիչներ	16,500
• Վարդակ	82,500
• Անջատիչ	42,000
• Ընդհանուր էլեկտրականություն՝ մալուխները, խողովակները, մոնտաժային տուփերը, էլեկտրական վահանակը, ավտոմատները և աշխատուժը	1,800,000
Կահույք	
• IKEA SANDSBERG chair H×W×D: 77×42×39 cm	805,000
Այլ	
• Պատուհանների վերականգնում	1,504,000
• Մաքրման աշխատանքներ	100,000

Ընդհանուր

Փոխարժեք՝ *1* ԱՄՆ դոլար = *365* ՀՀ դրամ

֏7,879,400